ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը՝**
   Աննա Իվանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության տարածքային կառավարման վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Իտալիայի Հանրապետություն, Տոսկանայի մարզ, սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 6-ը

4. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Ծանոթանալ Իտալիայում ՏԱԽ-երի ձևավորման, կառավարման երկարամյա փորձին

6. **Քննարկված թեմաները.**

Իտալական մշակութային ժառանգությանը, տեղական արտադրանքին և զբոսաշրջային ծառայությունները միմյանց կապելու ՏԱԽ-ի փորձի ներկայացում: «Կայուն զբոսաշրջության եվրոպական խարտիան տեղական կայուն զբոսաշրջության զարգացման համար՝ հիմնված LEADER/CLLD մեթոդաբանության վրա»: ՏԱԽ-ի կողմից ֆինանսավորված «Գեոպարկը որպես սոցիալ-տնտեսական և մշակութային խթան՝ մասնակցային գործունեության միջոցով կայուն զարգացման մոդել ստեղծելու նպատակով» ծրագրի ներկայացում, դրա մաս կազմող «DRAGO» կայուն գյուղմթերքի արտադրողների ցանցի՝ «GEOfood» ծրագրին (ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գեոպարկը կարող է խթանել տեղական գյուղատնտեսությունն) ծանոթացում և փորձի փոխանակում:

«DRAGO» ցանցի ծրագրերի ծանոթացում և տեղում ուսումնասիրում՝ այցելություն Սան Լուիջի ձիթհան (Կալդանա գյուղ): Այն ընտանեկան ձիթհան է,

որտեղ արտադրված ձիթապտղի ձեթին համապատասխան վճարում է արտանետված ածխաթթու գազի դիմաց:

Անգելա Սաբայի ոչխարաբուծական ծրագրին տեղում ծանոթացում: Տնտեսությունը զբաղվում է ոչխարաբուծությամբ և Օմեգա 3-ով հարստացված ոչխարի պանրի արտադրությամբ:

Այցելություն Տուշիա ՏԱԽ: ՏԱԽ-ի գործունեությանը, կառավարմանը և գործընկերային հարաբերություններին ծանոթանացում: Տեղում մանրամասն ներկայացվել են ՏԱԽ-ի առաջնահերթությունները և որոշումների կայացման համակարգը, ՏԱԽ-ի կողմից ծրագրերի ընտրությունը և ֆինանսական պլանի սահմանումը, ՏԱԽ-ի կողմից իրականացվող ծրագրերի առաջընթացի մոնիթորինգը և վերահսկողությունը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   - Այց Գրոսսետո քաղաքի Տեմա բանկ, որտեղ հանդիպել ենք բանկի տնօրեն Ֆաբիո Բեկերինի հետ, ով խոսել է Տեմա բանկի և ՏԱԽ-ի համագործակցություն մասին:
   - Այց «Տոսկանիայի Հանքարդյունաբերական ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գեոպարկ» տեղական զարգացման գործակալություն», որտեղ հանդիպել ենք Գավարրանո համայնքի քաղաքապետ Ստեֆանիա Ուլիվիերի և Գեոպարկի նախագահ Ֆաբիոլա Ֆավիլլիի հետ, որտեղ ներկայացվել է «Կայուն զբոսաշրջության եվրոպական խարտիան տեղական կայուն զբոսաշրջության զարգացման համար՝ հիմնված LEADER/CLLD մեթոդաբանության վրա» ծրագիրը, խոսվել քաղաքային իշխանությունների հետ համագործակցությունից:
   - Հանդիպում Ակվապենդենտե համայնքի քաղաքապետ Ալեսանդրա Սերոսիի հետ, Լացիոյի մարզի իշխանության ներկայացուցիչների և Տուշիա ՏԱԽ-ի նախագահ Մարկո Վալենտեի հետ, որից հետո ելույթներ են ունեցել Լոռու և Տավուշի մարզերի ՏԱԽ-երի ներկայացուցիչները:
   - Այց Ֆլորենցիայի Տոսկանայի մարզային կառավարություն՝ հանդիպում վարչության տնօրեն Ֆրանչեսկո Թապինասի հետ, հանդիպում Տոսկանայի կառավարությանը պատկանող Toscana Promozione Turismo զբոսաշրջային գործակալության ղեկավարության հետ:
   - Այց Ֆլորենցիայի համալսարան, հանդիպում պատմության, հնագիտության, աշխարհագրության, կերպարվեստի և ցուցադրական արվեստների բաժնի պրոֆեսորներ Միշել Նուչիոտտի և Զարուհի Պողոսյանի հետ: Հանդիպման ժամանակ խոսել են ՏԱԽ-ի շրջանակներից դուրս իտալ-հայկական նախագծերի մասին:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
   Չկան:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
   Այցելության ընթացքում LEADER ծրագրի վերաբերյալ ձեռք բերված գիտելիքները և փորձառությունները կիրառել՝ ՀՀ համայնքներում:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

09.10.2024թ.